բազգային ոյժ է հարկաւոր, այն ժամանակ ճըշ-
մարիտ է, որ գիւղացու վրէց կը վերառնեն նորա
քրտինքով տոգորված, ճնշող, կեղտոտ լուծը.
նորա տեղը կը դնեն նորը, փառքերով զարդա-
րուն, բայց աւելի ծանր, սեպհականը, որի
քրտինքը միշտ պէտք է լուանալ արիւնով։

Նորան կ'ասեն «այդ նոր լուծը թէև ծանրէ,
բայց քո սեպհականն է, քաշիր հոգիդ դուրս
գայ»։

Այն ժամանակ գիւղացին կը զգայ, որ թէև
քրդեր և արտաքին հարստահարողներ այլևս
չը կան, բայց իւր վիճակը աւելի և աւելի ծան-
բացել է, ներկան անցեալից աւելի վատ։

Այդ ծանրութեան տակը նա ընկճումէ, կոր-
ծանելով իւր վերայ հաստատված շինութիւնը,
տրորվելով նորա տակը։

Ազգութեան գոյութիւնը ազգային սնափա-
ռութեան առարկայի համար չէ, այլ ազգային
բարեկենդանութեան համար է. իսկ ազգային
բարեկենդանութեան հիմքը գիւղացու բարեկեն-
դանութիւն է։

Ես անզգալի կերպով Պարսկա-Հայաստանից
անցայ Տաճկա-Հայաստանը և կատարեցի մի մեծ
խոտորումն, որի համար մեծ ներողութիւն
խնդրելով վերադառնում եմ Մագու։

Այս քաղաքի սակաւաթիւ հայերը իւրեանց ըղ-